

12928

308147.925)

2-68

57

520

0.1930/7432

Գ. Դ. Զ. Ա. Ր Բ Ո Ւ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆՅԱԳԱՅԻՆ
ԽՆԴԻԲՆԵՐԸ ԳՅՈՒԳՈՒՄ

ՎԻԲԼԻԳՈՒԹԻՒՆ
ИНСТИТУТА
ПОСТОЛՈՎԱՆԻ
Ակադեմիա Խառ
ССР

ՊԵՏՈՎԱԿ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1930

4
2018
308(47.925)
2-68
գ. Գ.Ա.ԶՈՒԹՅՈՒՆ

25 SEP 2006 0.156/1432
EPOS 1 DEC 2009
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНСТИՏՈՒՏԻ
ՎԵՍՏՈՒԱՐԱԴԵԼԻ
Պահպան Խաչ
ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈՒՆՑՈՒՐԵԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԽ-
ԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԿԵՆՑԱԳԱՅԻՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ



ՀՀ-18802

ԳԵՂԱԳՈՒՆ ՀՐԱՄԱԿԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՑԵՎԱԳԱ 1929

18.06.2013

2005 932 3 9

12928

8109

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

«Անգլագետների յերկրում չե-
կարելի կոմմունիստական հա-
սարակակարգ ստեղծել»:

LbGhG

Հոկտեմբերյան և Նոյեմբերյան հեղափոխությունները բավական ուժեղ թափով և հիմնովին փոխեցին Հայաստանի պրոլետարիատի հին կենցաղը, նրա ընտանիքան և տնտեսական կյանքի ըոլոր ձեռքն ու սովորությունները:

Մեր լերկում պլրոլետարիատը քաղաքական իշխանությունը վերցնելով իր ձևոք՝ սոցիալիստական շինարարության, լերկրի ինդուստրիացման համառ աշխատանքների հետ միասին՝ գեն և շպրտել հին փառական կենցաղը և լծվել կուլտուրական շինարարության, կուլտուրական հեղափոխության վիթխարի գործին և կերտում ե ալսոր Նոր կենցաղ, պլրոլետարական կարմիր կենցաղ:



60981-67 Гумм. № 1119

ՊԵՏՎԱՆԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Քրոնեկտ. № 2755(բ.) Պատ. № 1168 Տիկ. 3000

Մեր հնգամյա պլանը, վորը վոչ այլինչ ե, յթե վոչ սոցիալիզմի կառուցման մաթեմատիկորեն հաշված ճշգրիտ պլանը վոչ միայն հեղաշրջելու յե մեր ծանր արդյունաբերությունը և յերկիրը յենթարկելու ինդուստրիացման, այլ և ստեղծելու յե այն կուլտուրական կյանքը, կուլտուրական այն հսկա հեղափոխությունը, վորն այսոր մեր կուսակցության ուշաղրության գլխավոր մեխերից մեկն ե. հանդիսանում:

Հնգամյա պլանի հաջող կիրտուման և պրոլետարիատի ստեղծած կուլտուրական կյանքի, կուլտուրական հեղափոխության և պրոլետարական կենցաղի վերջնական հաղթանակից ե կախված նաև գույղի կոլեկտիվիզացիան, գյուղատնտեսության վերակառուցումը, հին կենցաղի վերացումը և, վերջապես, կուլտուրական հեղափոխության հաղթանակը:

Միանգամայն անժխտելի յե այն փաստը, վոր Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և նրա հարազարձնունդ Նոյեմբերյան հեղափոխությունը բավականաչափ ուժեղ թափով. ու ցնցումով յերերել շարժել ու

հեղաշրջել հն նաև մեր զուուզը և հին, վըտած կենցաղին հակադրել նոր կենցաղը: Խորհրդային Հայաստանի ներկայիս գյուղը շնորհիվ Հոկտեմբերյան Նոյեմբերյան հեղափոխություն՝ շատ բաներով և փոխվել առաջադիմել:

Հայաստանի խորհրդայնացումը միտնդամայն հեղաշրջեց Հայաստանի աշխատավոր գյուղացու թե քաղաքական, թե տընտեսական, թե կուլտուրական կյանքը՝ և բաց արագ նրանց դասակարգակին պայքարի մշուշապատ գիտակցության աչքերը: Խորհրդային Հայաստանի բանվորն ու գյուղացին ըմբռնեցին խորհրդային իշխանության և նրա ղեկավար կոմմունիստական կուսակցության իսկական եյությունը, նրա նպատակները:

Այդ ըմբռնումն ու գիտակցությունը, գլխավորապես այս վերջին հինգ տարվա ընթացքում, ավելի ակնհայտնի դարձավ ու խորացավ: Հենց իրենց բանվորի, աշխատավոր գյուղացու ձեռքով, նրանց հեղափոխական կամքի ուժով իրար յետեկից պուած յեկան, ստեղծվեցին ու ծաղկեցին

սպառնղական, գյուղատնտեսական, այգեգործական, տնայնագործական կոռուպիրացիան, վարկային ընկերությունները, փոկելը, գյուղատնտեսական, մեքենաուդագործական ընկերությունները, չքավորական խմբակները, զանազան տեսակի արտիկները, վերջապես կոլեկտիվ տնտեսությունները, խրճիթ-ընթերցարանները, լիկայանները և կորչի անդրագիտաությունը ընկ.»-ը, մհածահատակների, գյուղատնտեսական և յերիտպրոցները, վերջապես տասնյակ հարցուրավոր գյուղական գվարոցներ, տասնյակ հաղարավոր աշակերտներով, պատժողովներ, հասարակական այս կամ այն կաղմակերպություններ, կարմիր անկյուններ և այլն և այլն:

Բացի վերհիշյալներից, մեր տարած համառ աշխատանքների արդյունք ու հետեւանք են նաև բազմաթիվ շինարարական աշխատանքներ, գյուղական աշխատավոր տարրերի ակտիվացումն ու նրանց լիվելը մեր սոցիալիստական շինարարությանը, կուսակցական, կոմյերիտասական և պիտուրական կազմակերպությունների աչքի զար-

նող աշխատացումն ու ակտիվացումն, բատրակների կազմակերպումը, նրանց մեջ տարած և տարվելիք կուլտուրական, կըթական աշխատանքները և այլն:

Ահա այս բոլորը գալիս են ասելու և ապացուցելու, վոր խորհրդային իշխանությունը խոշոր գործ ե կատարել բանվորի և աշխատավոր գյուղացու համար, բոլոր բնագավառներում, վոր գյուղացու հին կենցաղի մեջ զդալի ճեղքվածք և տուաջ և կելել, ճեղքվածք, վորը պետք ե ափելի խորացնել ու լայնացնել:

Սակայն գմբախտաբար պետք ե ասել և խոսովանել, վոր զյուղ մտած նոր կենցաղը գեռ թույլ է հին կենցաղի մոտ, վորը համառորեն իր տեղը բավական մեծ դժվարությամբ ե զիջում նորին:

Ահա, հին կենցաղի համառ դիմագրության և նորի դանդաղ քայլերի պատճառով ե, վոր գյուղում տարած և տարվելիք, թե սոցիալիստական, թե կուլտուրական և այլ աշխատանքներ հանդիպում են խոշոր սոցիալիստական շինարարությանը, դանդաղեցնում մեր բոլոր աշխատանքների ընթացքն ու գրոհը:

Գյուղի աշխատավոր մասսաների քաղաքական, տնտեսական, շինարարական վլույտության և այլ հետամնացություններ հետեւանք ե հին, փտած կենցաղի, վորի մեջ հազարավոր տարիներ ապրել ու շնչել են նրանք, և վորոնք, դժբախոաքարը վորպես ժառանգություն անցել են մեզ, Հին, փտած կենցաղ, վորն ամենախոշոր պատճառներից ե մեր անդրագիտության և անկուլտուրականության: Մի ցավ, մի հոգս, վորն այսոր գիրմարդկային անսպառ ուժ, յեւանդ ու զբամական խոշոր միջնակեր ե ողահանջում վերացնելու և հաղթահարելու այն:

Խորհրդակին իշխանության և նրա զեկավար կոմմունիստական կուսակցության մղած հուժկու պայքարը՝ քաղաքական, տնտեսական, գյուղատնտեսության վերակառուցման, ինդուստրիացման, տրանսպորտի ֆրոնտներում և մի շարք այլ բնագավառներում հաջողությանը տանելուց հետո վերջին 3-4 տարվա ընթացքում, զիսավորական 1928 թ. սկսած, իր ամենամեծ ուշադրության առարկան, մեխու, աշխատանքի կենտրոնը դարձել է գեղի կուլտուրական

աշխատանքը, անգրագիտության վերացման – կուլտուրական հեղափոխուրյան հրատապ վիթխարի գործը:

Հին կենցաղի մնացորդների, կրոնի ու միշտոք վնասակար սովորությունների ու յերկույթների գեմ մնխնա պայքարելը. և կուլտուրական հեղափոխության անհրաժեշտությունն այսոր մեզ համար այնքան և հասունացել, աղաղակող փաստ գարձել վոր մեր կուսակցության 15-րդ համագումարը, նրանից հետո մինչեւ այժմ յեղած թե Համամիութենական կենտրոնի և թե Հայաստանի կենտրոնի պլենումները բավական լուրջ զբաղվել են կուլտուրական հեղափոխության խնդիրներով և արել մի շարք գործնական վորոշումներ:

Ընկ. Լենինն իր կենդանության ժամանակ, իր վերջին հոդվածներից մեկում կուլտուրական խնդիրների մասին հետեւյալն ե գրում. «Այդ արմատական փոփոխությունը կալանում ե նրանում, վոր մենք առաջ ծանրության կենտրոնը դարձնում ելինք, և պարտավոր ելինք դարձնել քաղաքական պայքարը, հեղափոխությունը,

իշխանության նվաճումները և աղջկէ իսկ
այժմ ծանրության կենտրոնը փոխվում ե
այն չափով, վոր փոխանցվում ե լիազադ
կաղմակերպչական, «կուլտուրական»՝ աշ-
խատանքի: Յեսա պատրաստ են ասելու,
վոր ծանրության կենտրոնը մեզ համար
փոխանցվում ե կուլտուրականության, յեթէ
չինիյին միջազգային փոխարարերություն-
ները, յեթէ հարկադրված չինիյինք պաշտ-
պանելու մեր դիրքերը միջազգային մասշ-
տաբով: Բայց յեթէ մի կողմ թողնենք այդ
և սահմանափակվենք տնտեսական փոխար-
արերություններով, ապա մեզ մոտ այժմ
իրոք վոր ծանրության կենտրոնը պար-
փակվում ե կուլտուրարարության մեջ:

Ուրեմն սրանից պարզ յերեռում ե, վոր
մեր կուսակցությունը և նրա հանճարեղ
առաջնորդ - ընկ. Լինինը վաղուց զգացել
են կուլտուրաբարության, կուլտուրական հե-
ղափոխության խիստ կարևորությունը,
բայց մեր դրությունը միջազգային քաղա-
քական ջրապատճենում՝ թուլ չի ավել,
վոր ժամանքության կենտրոնը մեզ համար
փոխանցվի կուլտուրաբարության:

Սյուր գյուղական թե անհատական տրն-
տեսությունների և թե կոլտնտեսություն-
ների արագ աճման, գյուղատնտեսության
վերակառուցման, մեր լեռների ինդուստրիաց-
ման, քաղաքի գործարանալին, արդյունա-
բերական նյուղերի, ապրանքների աճման
հետևանքով, գյուղի շերտավայրման, կու-
լակների բացահայտ աշխուժացման — ակտի-
վացման հետևանքով ակտիվացում կա և
չքավորի, բատրակի ու միջակի կողմից:
Ահա այդ պատճառով ել այսոր մեր գյուղը
դարձել ե գասակարգային պայքարի թա-
տերաբեմ: Պայքար, վորից հալթանակով
դուրս զալու համար պետք ե ունենալ բա-
վական փորձված և սուր գենք, խելոք և
հմուտ տակտիկա ու քաղաքականություն:
Այնպես պետք ե անել, վոր չքավորի ու մի-
ջակի դաշինքն ել ավելի ամրանա ու ան-
խղելի դառնա: Մի դաշինք, վորի մասին
իսոսել են ընկ. Լենինը և նրա կուսակցու-
թյունը: Դաշինք, վորը կապված պետք ե
լինի այն ամուր ողակներով, վոր կուել ու
կոփել ե ոռուսական հեղափոխական հաղ-
թական պրոլետարիատը:

Ցեզ այս բոլորն արագ, անսխալ և արդյունավետ կարվի այն ժամանակ, յիշը մինք գյուղում վերացրած կլինինք հին կենցաղը, նրա մնացորդները՝ կրոնը, աստիճն քարացած գաղափարը և գուղղում առաջ կրերենք կուլտուրական հեղափոխությունն Կուլտուրական հեղափոխության իմաստը բացատրելու համար ընկ կենինը դեռ 1923 թվին առել ե հետեւյալը.

«Մեր առջև ծանրանում են յերկու զըլիսավոր ինդիրներ, վորոնք դարաշրջան են կազմելու: Դա մեր ապագարատիքարեփոխության ինդիրն ե, ապագարատիքի վոր բոլորովին բանի պետքական չե, և վորը մենք ամբողջապես ժառանգել ենք հին ժամանակաշրջանից:

«Այստեղ, հինգ տարվա պայքարի ընթացքում, մենք լրջորեն բարեփոխել վոչինչ չըկարողացանք:

«Մեր յերկորսի խնդիրն ե գուղղացիության համար կուլտուրական աշխատանք կատարելը, իսկ այդ կուլտուրական աշխատանքը գլուղացիության մեջ, վորպես անահետական մի նպատակ, հետապնդում ե

հատկապես կոնպելացումը: Լինկատար կոռպերացման պայմաններում մենք արգեն վերկու վատքով կանգնած կլինինք սոցիալիստական հողի վրա: Սակայն լիտակատար կոռպերացման այդ պայմանը յենթադրում ե իր մեջ գյուղացիության անպիսի մի կուլտուրականություն (հատկապես գյուղացիության, վորպես հսկացական մի մասսայի), վոր այդ լիտակատար կոռպերացումն անհնարին ե առանց մի ամբողջ կուլտուրական հեղափոխության»:

Ահա թե ինչպես ե հասկացել ընկ. Լենինը կուլտուրական հեղափոխությունը և հանճարեղ կերպով բնորոշել նրա կարենորագույն դերն ու նշանակությունը գյուղական հոծ մասսաների ու նրանց աշխատանքը ների բոլոր բնագավառներում, կուլտուրական կյանքի ասպարիզում:

Գյուղական անտեսությունների (թե անհատական, թե կոլլեկտիվ) աճման, գյուղի շերտավորման և դասակարգացին սուր ներհակությունների ու ներկայիս սկսվածութեղ պայքարի հետևանքով՝ գյուղի աշխատավոր տարրերը բավականաչափ աշխու-

ժացել ակտիվացել հնուու իրաստ պահանջ են զգում կուլտուրական սննդի. Նրանք ծարավի լեն լծվելու կուլտուրական հեղափոխության աշխատանքներին և նվաճելու կուլտուրական բոլոր բարիքները, նվաճելու և ամրապնդելու հեղափոխության դասակարգային իդեոլոգիայի բարձունքները, Բարձունքները, վորոնք նույնքան կարեոր և նշանակալից են մեր սոցիալիստական, կուլտուրական շինարարության, Հոկտեմբերյան, Նոյեմբերյան հեղափոխությունների նվաճումների, տարածման ու խորացման համար, վորչան վոր քաղաքական, տնտեսական, արդյունաբերական, կոռպակերացիայի և կոլեկտիվիզացիայի հրամայողական բարձունքների նվաճումները, վորոնց Խորհրդադատի Միության հեղափոխական ու հաղթական պրոլետարիատը հասել ե բավական յերկար, ժամը, բայց բավական համառ ու հերոսական պայքարից հետո:

Պետք ե խստովանել և ընդգծել, վոր կուլտուրական, հեղափոխության, անզիագիտության վերացման, հին կենցաղի դեմ կռվիլու և իդեոլոգիական ֆրոնտում մղվե-

լիք մեր պայքարը բավական լուրջ, միանգամայն դժվարին պայքարներից ե: Բայց կոմմունիստական կուսակցության և խորհրդակցին իշխանության նշամար նա անհաղթ թերի ուժու դժվարին խոչընդուռ չեւ Մեր կուսակցությունը դրանից ավելի խողոք դժվարություններ ե հաղթահարել և նրանց ծունկի յերեկ իր յերկաթե, հղոր, անսասան կարողության ու կամքի առջև: Այսպիսս վոր նա բավականաշափ ուժ կունենա պահաղթանակով դուրս գալու նաև այս պայքարից: Պացքար, վոր տարփում ե կուլտուրական հեղափոխուրյան ռազմադրսում:

Հին կենցաղի, հին վասակար սովորությունների դեմ մղվելիք պայքարի և կուլտուրական հեղափոխության ճակատում պեսված կռվի զենքերը պետք ե լինեն վեսկաված կռվի զենքերը պետք ե լինեն վերին աստիճանի սուր, փորձված և զգուշ, վորպեսզի այդ պայքարի ընթացքում խովոր սխալներ ու թյուրիմացություններ չկատարվեն, վորպեսզի մեր հաղթանակը չկատարվեն, ապահովված լինեն կուլտուրական հեղափոխության հաղթահականից ու նվաճումները:

Այժմ տեսնենք, թե հին կենցաղի ինչպիսի մնացորդներ, ինչ սովորություններ գոյություն ունեն զբուղում։ Սովորություններ, վորոնց դեմ մինչև այժմ շատ անհշահ պայքար ենք տարին։ Միայն այս վերջին յերկու տարին և, վոր սկսել ենք պայքարել Պայքարել այն ել ավելի ուժեղ, ավելի անողոք, շեշտակի ու անվրիու։

«Մաճկալ» թերթի 2000 գյուղթղթակիցները, վորոնք հանդիսանում են զուղի ակտիվ, առաջավոր ուժերը, և վորոնց վրա յի Ներկայումս ծանրացած հին կենցաղի դեմ պայքարելու և նոր կենցաղ ստեղծելու աշխատանքի խոշոր բաժինը, շարունակ իրենց թղթակցությունների 25-30 տոկոսի մեջ զրում են հին և նոր կենցաղի մասին։


ՀԱՐԱԿԵԴԱԿԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ

Մեր գյուղում գեռ բավական համառ կերպով շարունակվում են «Ճաղավ», «Կանչով», «Խալաթով» (նվերներ) հարսանիքները։ Այս ձևի, այս տեսակի հարսանիքները վոչ այլ ինչ են, յեթե վոչ շահագիտության,

թալանի «Քաղաքավարի» միջոցներ։ Հազար ու մի տեսակ ոյինքաղություններով են արվում այդ հարսանիքները։ Հազարավոր կուրողներ և այլանդակ յերկույթներ են տեղի ունենում այդ հարսանիքների ժամանակի։

60981-67

«Ծագով» վոչ միայն կուլակներն ու անկուսակցականներն են հարսանիք անում, կուսակցականներն ու կոմիերիտատ յի կուսակցականներից ու կոմիերիտատներից վոմանք։ Գյուղթղթակիցները տասնյակ գետքերի մասին գրել են «Մաճկալ»-ին։ Մեկի փողը հենց վոր վերջանում է կամ թե խոշոր կարիք և ունենում փողի, ել պրօտիվ։ Նստում եւ ձեռաց վորոշում, միջոցը գտնում։ Իր 12-13 տարեկան տղջրկան կամ կամ տղային նշանում և իր պես մի «խելոք» մտածողի տղայի կամ աղջկա հետ և առանց ուշացնելու պատկում, «քյարինը» կտրում, իր հարկանիներին, ծանոթներին, բարեկամներին «պատվում» - թալանում։ Հարանիքին շատ-շատ ծախսվում ե 100-150 ոռոբլի, իսկ կանչի, ծաղի, խալաթի ժամանակ հավաքվում ե առնվազն 450-500 ոռոբլի զրամ և ուրիշ շատ նվերներ։



РОДСТВЕНСКИЙ
ИНСТИТУТ
ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЯ НАУК СССР
ЗООЛОГИЧЕСКИЙ КАФЕДРА
Научно-исследовательский институт
Министерства культуры СССР

Ահա այդ ե պատճառը, վոր յերբեմն մեր
կուսակցականներից և կոմիտեիտականներից
վորանք գայթակղվում և ամուսնանում են
ծաղով, իրենց տնտեսությունը բարձրաց-
նելու, փող վաստակելու նպատակով:

Ծաղով կատարված և կատարվող հար-
սանիքները կամ ամուսնությունները լի-
նում են տերտերով, յեկեղեցու միջոցով և
պահադրության համար՝ բավական չաղ
վարձատրություն են տալիս «սուրբ» տեր-
տերնիքներն:

Ըստ «Մաճկալ»-ի թղթակիցների գրած-
ների՝ ամուսնությունների համարյա 70
տոկոսը տեղի յեն ունենում բռնի ուժի և
զանազան սպառնալիքների տակ: Գյուղում
յիթե մի աղջիկ աչքադրած ե լինում մի
տղայի վրա, և փոխադարձաքար նրանք սի-
րում են իրար, աղջկա հայրը, համաձայն
շահադիտական և այլ նպատակների՝ չի տա-
մա նրան և զոռով ամուսնացնում և իր
ուզած տղայի հետ, և յերբեք չի մտածում
այն մասին, վոր գրանով գժբախտացնում
է իր զավակին: Արժե, վոր այս մասին
թույլ տանք, վոր խոնիւամաճկալ»-ի զյուղ:

թղթակիցը: Նոր-Բայազետի Ղարանլուղ
գյուղից թղթակից Միթիկն ուր կամքով
գնացա թղթակցության մեջ գրում ե.
«Հունվարի 30-ին Արսեն Բուլոյանի տղա-
լին նշաննեցին բռնի կերպով: Աղջկան հարց
ելին տալիս՝ առնմէմ ես ես տղային, թե
վոչ, իսկ աղջիկը պատասխանում եր՝ «Վոչ»,
սակայն սրանով չի վերջանում. զոռով տա-
նում են Զաքս: Աղջիկը Զաքսում ասում ե,
վոր այդ տղային չի սիրում, այլ սիրում ե
այս-ինչ կարմիր-բանակայինին»:

Եատ ընտանիքներ եր բացի շահադիտա-
կան նպատակներից, ունեն մի այլ նպատակ:
Դա հետեւյալն ե. ամեն կերպ, ինչ զնով ելլե-
նի, աշխատել աղջիկ ուզել զյուղի ունենոր ըն-
տանիքից, գյուղի զոռքա թայֆալից կամ թե
այնպիսի ընտանիքից, վորից խորհրդալին
վարչուկան որգաններում կամ կուսակցական
կազմակերպություններում աշխատողներ
կան: Գյուղի մեջանը, աբըվատելն այն
կարծիքի յեն, վոր դրանց միջոցով գյուղում
կարող կլինի և առհասարակ կարելի յե ա-
կարող կլինի առհասարակ կարելի յե ա-
պահովել իր պատիմ ու հեղինակությունը
և վալել վորոշ արտօնություններ:

Լինգավառի Վ.-Թալինի մի կուլակային ընտանիքում իրենց փոքրիկ տղալին համար աղջիկ ուղելու առթիվ նշանվող տղալի հոր և ծերունի, պապի միջև ծագում ե խսակցություն։ Ահա այդ մասին նույն զյուղի թըղթակից Վարագուատ Թովմասյանը գրում ե՝ «Ծերունի հայրն ասում, ե տղին. «Ճն, հողի եշ, ախմախ գլխիդ, տն, դու քո՞յ ես, չես տեսնում, վոր մենք հարուստ տուն ենք»։ Ես տարի մեղանից 5 ոռւրի ջրալին տու գանք առան, 15 ոռւրի յել գոմեշ գողաշնալու համար առան. դեհ, վոր մեկնաշուսեմ, վոր մեկը թողնեմ ե. Դիլոնց ազգը քյոմագով ե. Նրանց Արտուշը զյուղիսորհրդի նախագահ ե, Սարդիսը գործկոմի քարտուղար, սրանք վոր մեր քամակն անցան՝ բոլ ա ելի»։

Ահա այլանդակ հասկացողություն և մը տախություն, վորոնք ժառանգություն են մնացել հին, ցարական, դաշնակցական կառուակարությունների թայֆայաբազ, կուլակապաշտ քաղաքականությունից։

Թափական տարածված և շատ սովորական յերեսոյթ ե աղջիկ գախցնելու Մեր

գյուղերում գեռ հերոսություն, իգիթություն և համարվում աղջիկ գախցնելը։

Այս յերեսոյթն ու սովորությունը հին կենցաղի ամենաայլանդակ և կեղտուտ մնացորդներից ե, վորի գեմ մեր պայքարը պիտք ե լինի անողոք։

ԿՈՌԻՆՔ ՅԵԼ ԹՅՈՂՈՒՄ

Գյուղում թե կնունքը և թե թաղումը կատարում են մեծ մասամբ հին ձեւով ու ծիսակատարություններով։ Քելեխը գեռ գոյությունը ունի թափական մոլիուանդ կերպով շարունակվում ե կնունք-մկրտությունը, կուլակալին ունեօր տարրերը բավական ճոխ և բազմամարդ կերուխումով են կան ճոխ և բազմամարդ կերուխումով են կատարում իրենց նորածինների կնունքը։ Մկրտում են յեկեղեցուն և իհնդրում քահանային, վոր վորքան կաթելի յի շատ մեռն քսի յերեխալի մարմին, մանավանդ ճակատին, վորպեսզի յերեխան «ծուց» և «ավագակ» գուլու չգա։ Զքավորները նույնպես, թեև չեն կարողանում ճոխ կերուալում կատարել իրենց յերեխանների մը կըրտությունը, բայց իլի մի «թեթե» քեզ

են սարքում, Միջակը, չքավորը թաղման կամ կունքի ժամանակ մորթում ե իր մի հատիկ անասունը, անգամ լծկան յեզը, սեղանի վրա դնում ընտանիքի վերջին պատռ հացը՝ և այլն։ Գյուղացին, զժբախտաբար, մի քելեխով դեռ վերջացած չի համարում իր պարտքը «հանդերձյալ կյանքի քաղցածներին»։

Ահա կենցաղ, սովորություն, վորոնք ազգում են նոր կենցաղի բեղմնավորմանը, վորոնք այնուհետև բավականին զգալի խոչընդոտ են լինելու, կուլտուրական հեղափոխության ճակատում տարվելիք պայքարի ընթացքում, մեր բոլոր աշխատանքների գործին։

ԿՐՈՆԱՄԱԼՈՒԹՅՈՒՆ

Գյուղի հին կենցաղի մեջ ամենասոսական և արմատականը կրոնամոլությունն ե նրա ազդեցությունը։

Մեր գյուղական ազգաբնակության համարյա 60—70 տոկոծը բավական մեծ ակնածությամբ ու ջերմիուանդությամբ դեռ հետեւմ և կատարում ե կրոնական վողջ

†

ծեսերն իրենց մանրամասն ձևականություններով և առանց բացառության տունում բոլոր տոնները։

Զըրոհնեքին վոչ միայն կուլակները, ունկորներն ու հավատացյալներն ին մասնակցում, այլ մասամբ բատրակներից, չքավորներից և կոմիերիտականներից։ Անցյալ տարվա ջրորհնեքին վերոհիշյալներից վոչ միայն լոկ մասնակցել են, այլև մի գյուղում մի բատրակ 8 ոռւբլի յետվել, խաչը ջրից հանել, խակ այս տարի քանաքեռցի չքավոր Ավետիս Նաղարյանը, ինքն ել չքավորական խմբակի անդամ, խաչը ջրից հանել ե և ամբողջ մի շաբաթ տանը կերուխում սարքել, կուլակներին կերակրել։

Խակ այդ «խաչեղբայր» բատրակը չի բավականացել 8 ոռւբլի տերտերի գրպանը գցելով, Խաչը տանելով իր տուն՝ խաչի գլխին կերուխում ել ե սարքել։

Ահա այս ամենը գալիս են ասելու, վոր մեր բատրակների և կոմիերիտականների մեջ վոչ միայն հակակրոնական ագիտացիան, այլև կուսդասատիարակչական աշխատանքները թույլ են տարվել։

Պետք եռ ուժեղացնել հակակրոնական պրո-
պագանդան, կազմակերպել անասովվածնե-
րի նոր խմբակներ և յեղածներն ել ուժե-
ղացնել, աշխատանքի կոչել:

ՄՆՈՏԻՑՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Բավական խոր արմատներ ունի նաև մնո-
տիապաշտությունը, վորը վերացնելու, ար-
մատախիլ անելու համար մինչև այժմ շատ
քիչ աշխատանք ե տարվել:

Հին «զորավոր» վանքերը, «սրբերը», խաչ-
քարերը և այլն և այլն, գյուղական հավա-
տացիալ, սնոտիապաշտություն նախապաշարված
խավերի համար դեռևս շարունակում են մնալ
վորպես կուռքեր, ֆետիշներ և մարմավոր-
ված հերոսներ, գերբնական ուժեր, վորոնց
գործը շարունակ հրաշագործություններն
են, և վորոնք «ամենակարողն» են ամեն
ինչ անելու: Յուրաքանչյուր տարի Հայաս-
տանի տերրիտորիայի վրա գտնվող ուժա-
տատեղիներում հազարավոր կենդանիներ
են մրրթում, «ամատաղ անում» ի փառս
հավատացյալների և ի ստամոքսն քահա-
նաների...

1927 թվի դեկտեմբերի 8-ի լուսնի խա-
վարումը խոշոր իրարանցում առաջ բերեց
գլուզերում, և սկսեցին զանազան յենթա-
դրություններ անել: Հենց այդ պատճառով
ել «Մաճկալ»-ի գյուղթղթակիցներից շատ-
շատերն ալդ մասին վրեցին «Մաճկալ»-ին
և խնդրեցին բացատրություն, վլուվհետև
գյուղացիությունը մոլորության մէջ ե և
լուսնի խավարումը կապում ե նոր զալիք
պատերազմների, հիվանդությունների, սովի
հետ և վերազրում ինչ-վոր գերբնական ու-
ժի: Ահա այդ մասին գրած թղթակցու-
թյուններից մեկը:

Շամշադինի Նորաշեն գյուղից Գրիգոր
Ավագյանը գորում ե. — «Հարց... գեկտեմբե-
րի 8-ին, յերեկոյան ժամը 10-ին մեր գյու-
ղում տեղի ունեցավ մի հրաշք. զիշերվա-
ժամը 9-ին լուսնի գույնը փոխվեց, դար-
ձավ սև, մի քսան ըոպելից հետո լուսինն
ստացավ իր սեփական լուսը: Դրա վրա
գյուղացիությունն անհանգստություն ե
ստացել: Ասում են, վոր շուտով կոխվ և լի-
նելու: Գյուղի կուտուրական ուժերը չեն
կարողանում պատասխան տալ: Խնդրում

եմ շուտ պատասխան տաք»։ Զնայած վոր վորոշ չափով չափաղանցություն ե, բայց և այնպես փաստը մնում ե փաստ, վոր գյուղում մնութիւնապաշտության, նախապաշարումների և բնական զանազան լիրկութների առթիվ, նրանց շուրջը չեն կազմակերպել բնագիտական մատչելի զրուցներ։ Դրա համար ել այսոր վոչ միայն գյուղացին, այլև թերթի թղթակիցը, շատ թե քիչ գյուղի գիտակից տարրերից՝ չգիտեն, թե ինչի՞նեւանք ե լուսնի կամ արևի խավարումը։

Մեր գյուղերում շարունակում են դեռ գյություն ունենալ զանազան գրբացներ, բախտագուշակներ, թալիսման անողներ և այլն, վորոնք շարունակում են խավարի մեջ պահել գյուղացու միտքն ու գիտակցությունը և ապրել նրանցից կորզած վողերով։

Դժբախտությունն այն ե, վոր այդ ֆալշի-գրացներին հավատում են նաև գյուղում աշխատող վարժուհիներից, ուսուցիչներից և խորհրդակին ու այլ հաստատություններում աշխատողներից վոմանք։

Այս լիրկութները նույնպես խո-

չնդուաներ են գյուղում տարվելիք մեր կուլտուրական պատճառի ասպարիզում։

ՍԻՒԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սրիկայության կամ խուլիգանության գեմ մեզ մոտ՝ չայստանում շատ քիչ պատարացար և տարվելու թերեւս լոկ այն պատճառով, վոր կարծել և ինքներս մեզ համոզել ենք, թե մեզ մոտ սրիկաներ չկան, կամ յեթե կան ել՝ քիչ են ու չարժի դրանց մասին մտածել։ Դա սիալ ե, ինալիկ։

Ցարական ոեժիմի և գաշնակցական քաղաքականության ներքո պատրաստված, նրանց ավագանում մկրտչած, նրանց գաստիարակած աներես և լոպալազ սրիկաներից դեռ շատ քչերն են ուղղվել և լինթարկվել խորհրդացին որինապահության, նրա սրինցիպներին։

Այդ սրիկաները շարունակ թափառում են քաղաքի փողոցները, շուկան, մոտենում սրան-նրան, չնչին բանի համար վեճեր սարքում, հաճախ ել դանակներ հանդես բերում և վիրավորում սրան-նրան։

Հայհուանքն, անտեղի կերպով մեկի վրա հարձակվելն ու ծեծելը, նախալ ձեռվ կնոջ

հետ ծանոթանալը, զենքի սպառնալիքի
տակ բռնաբարություն կատարելը, թատ-
րոններում, կինոներում և նման հասարա-
կական տեղերում աղմկելը, ցինիկ արտա-
հայտություններ ու բացականչություններ
թուցլ աշալը՝ այս բոլորը հին ուժիմի խու-
լիգանական դաստիարակության հետևանք-
ներն ու մնացորդներն հն, վորոնց զեմ մեր
պարաբարը պետք ելինի շեշտակի և անողոք:

Գյուղի սրիկաներն ել ունեն իրենց «աշ-
խատանքի» ձևերը: Նրանք հացահատիկնե-
րի, խոտերի գեղեր են վառում, մարագներ
ու տներ են հրդեհում: Բացի զրանից, զի-
շերները գնում են այս կամ այն ալրի կնոջ
տան վրա և ալին և այլն:

Մթթե այս արարքները սրիկայություն-
ներ չեն և սրանց հեղինակները սրիկաներ:
Մթթե սա հին կենցաղ չե և ամենաայլան-
դակ ժառանգությունը՝ նախկին կարգերից
մնացած, վորի գեմ կովելու համար խոշոր
գեր ու պարտականություններ ունեն կա-
տարելու կոմսոմոլլ, մեր վարչական մար-
մինները, առավել ևս մեր կարմիր միլի-
ցիան:

ՀԱՐԻՑՅՈՒԹՅՈՒՆ

Հին կենցաղի մեջ գլխավոր և «պատվա-
վոր» տրագիցիաներից ե հարբեցողությու-
նը կամ կոնծաբանությունը: Մի շարք գլու-
ղերում կան հայտնի խմողներից կազմված
շայկաներ, վորոնք բացի հարսանիքներում,
այլև կամ այն հալվաքույթներում խը-
մելուց, հարբելուց՝ նրանք գլուղում ունեն
վորոշ մարդիկ, վորոնց մոտ այդ «սպեց»
կոնծողները շարունակարար հավաքվում և
հարբում են:

Դժբախտաբար, լիրիկն այդ խմողների
խմբերի մեջ մեկ-մեկ հլ ընկնում են թե
կուսակցականներ, կոմիկերիտականներ և թե
գյուղում աշխատող այլ ընկերներ, մասնա-
վորապես գլուղիսորհրդի նախագահներից:
Հարբեցողության հետևանքն այն ելինում,
վոր ծագում են բավական անախորժ ոկան-
գուններ, ծեծ, սպանություն և բռնաբարու-
թյուններ:

Ցավոք սրտի պետք ե ասել, վոր այս ա-
րատի, այս յերեսութի գեմ կավելու ասպա-
րիզում նույնպես վոչինչ չի արվել գլուղի
կուս. և կոմյերիտ կազմակերպությունների

կողմից: Այս, արատ, վարակիչ հիվանդություն ու զեֆեկտ, վորը նույնպես խոշոր խոչընդուռ և հանդիսացել և պիտի հանդիսանաւ մեր կուլտուրական աշխատանքների ճանապարհին:

ԹԱՐԱՊԵԴԻ

Հայաստանի համարյա բոլոր գավառներում տարածված և թղթախաղը և զումարբագությունը, վորոնք նույնպես քիչ պախարակելի, այլանդակ ու հիվանդագին յերեվությունը չեն: Յերևույթներ, վորոնք իրենց ուրույն տեղն են զրավում հին կենցաղի բնագավառում և առաջ են բերում բավական վնասակար, քայլավիչ հետևանքներ գյուղական յերիտասարդ սերնդի կյանքում և խոչընդուռ հանդիսանում գյուղում տարվելիք մեր բոլոր աշխատանքներին: Գյուղերում կան զումարբազների խմբեր, հավաքութիւն հատուկ տեղերով, վորոնք շարունակ զբաղվում են այդ «յերանելի» արհեստով և թալանում այն խեղճ ու կրակ մարդկանց, վորոնք պատահմամբ առաջին անգամ ընկել են նրանց թակարդը:

«Մաճկալ»-ի թղթակիցների գրելուց յեւսում ե, վոր շատ չքավորներ, գյուղխորհը հըրդի անդամներ և մյուս հիմնարկներում աշխատող անձնավորություններից նույնպես՝ «հյուրընկալվում» են այդ «վաստակալից» տեղերում և թալանվում վոտից գլուխից ավալին ե, վոր զրանցից շատերն իրենց տան յեղած-չեղածը ծախում և թղթախաղում են դնում:

Պետք ե ասել, վոր գյուղի թղթամոլ դումարբազների մեծ մասը հենց գյուղի սրիւկաներն ու հարբեցողներն են:

Այս ախտի գեմ պայքար մինչև այսոր վոչ մեր մամուն և տարել, վոչ ել գյուղում գյուղություն ունեցող համապատասխան մարմինները:

ՆԻՍՏՈՒԿԸՑ

Մեր գյուղացիների նիստուկացը, սովորությունները 80 տոկոսով գեռ հինն են, նահապետականը: Նոր կենցաղն իր պայքարի ուղիների վրա, հանձինս հին կենցաքարի գերակշռող մնացորդների՝ հանդիպում են հսկայական խոչընդուռների:

Խոնսենք փաստերով և որինակներով: Մեր գյուղացին տարրական մաքրության, մաքուր հագնելու, մարմինը մաքուր պահելու, մաքուր ուտելու և խմելու մասին դեռ քիչ գաղափար ունի, իսկ յեթե վորոշ չափով ել ունի և կարդող կլինի, թերևս, մաքուր, քիչ տանելի, բարեկեցիկ կյանք վարել: Նա չի անում այդ, վորովիետև մի տեսակ ծուլանում է, ինչպես իրենք են ասում՝ ձալարում» (թամբալանում): Ե, կարծես թե նոր կենցաղով ապրելը նրա համար սրբազնություն ե և դեմ ու հակառակ իր հանգուցյալ պապերին ու նախնիքներին:

Մեր գյուղերում դեռ շարունակում են 15-20 հոգով ապրել մի սենյակում, մի դարա դամում (սե տուն), իսկ շատ շատերն ապրում են ողաներում, անասունների հետ միասին, մի հարկի տակ:

Գյուղացիք լավ սննդի, հաժով, հոտով և սննդարար կերակուրքների մասին չեն մտածում: Ինչ վոր պատահում ե, ինչպես վոր կարողանում են, այնպես ել լեփում, ուտում են: Գյուղացին անդի, կերակրների համար միշտ ել ամբարած ունենում ե բա-

վական առաջ, բազմազան համեմներ և կենսանյութեր, բայց դժբախտաբար այդ բոլորը զուր փշանում են: Ինչպես իրենք, գյուղացիներն են ասում, «ամեն ինչ կը-րակի վրա խըշվըշտորում ենք, ուտում»:

Հայաստանի բոլոր գավառներն ու գավառակները համարյա թե ունեն իրարից տարբեր տարած—հագուստի հատուկ ձեւ, և սոսկալի չեն մի շարք տարազներ: Որինակ՝ Ղարաբաղի, Զանգեղուրի և Դարալազյազի կանանց տարազը, նրանց հագուստը վոչ այլ ինչ ե, ևթե վոչ զանազան ֆալասների, կտավների, գործվածքների ու դրամների խառն կույտեր, վորոնց մեջ, վորոնց տակ քրանաթոր տնքում են վոչ միայն պառամբները, այլև ջահել հարսները: Պետք ե ասել, վոր ամիսներով այդ փալասները մնում են անլվա, կպած նրանց մարմնին և միջատների առաջ աղբյուր ծառալսում: Նախանձելի չե և տղամարդկանց հագուստը: Տղամարդիկը գլխավորապես ծերերն ու տարիքավորները, համարյա թե ճերմակ կառըներից շապիկ չեն հագնում: հագնում են գունավոր չթերից կարած շապիկներ, իսկ

վրայից ինչից վո՞ւ պատահի: Յեթե պատահում ե, վոր կտավից, բյազից շապիկ են հագնում, անպայման պետք է կապույտ գույնով ներկեն:

Ծարունակ կեղաստ և գարշահոտ վիճակում են լինում նրանց բրդե չուխաները և վոռքերի տրեխներն իրենց «չնաշխարհիկ» գուլպաներով։ Լվացքը շատ ուշուու են անում, այն ել հաճախ առանց սապոնի և յեռացրած ջրի։ Գյուղի չքափոր դասն իր լըլացքն անուն է սառը ջրում, գետերում, առուներում և անգամ առանց հարթուկելու։ Միանգաման հակաառողջապահական են նաև տղամարդկանց մորթի-մոթալ փափախները, վորոնք տարվա չորս յեղանակներին մնում են անփոփոխ և բարեհաճում են տիրոջ գլխից իջնել միայն յիկեղեցում ջրոբինեքին և զատկին։

Ուրեմն այսպիսով տեսնում ենք, վոր յեկ-
րոպական տարրագը դեռ շատ քիչ քանակով
և մուտք գործել դրույթ Ալդ քիչն ել իրենց
հետ տարել են քաղաքում ապրած, աշխա-
տած անհատներ, վորոնք վերադառնալով
գյուղ՝ միքանի տարի հագել են այդ հա-

գուստը, մաշել և մնալով գլուղում՝ ստիպ-
ված նորից վերադարձել իրենց պատերի
«խեր ու բարաքաթով իի» տարապին:

Գյուղական մեր կուս. և կոմսոմոլիստ
ընկերներից շատերը դեռ հագնում են չու-
խա, ներկած շապիկ, տրեխներ, ծածկում
են մոթալ փափախ և ացն և ալին. Մինչ-
դեռ դրանք, վոր գլուզում հին կենցաղի-
դեմ կովողներ են հանդիսանում, վոչ թե
կովել են հին տարազի գործածության դեմ,
այլ իրենք ել են կրել այդ տարազը, գը-
րախտաբար դեռ շարունակում են կրել:

Հին տարազի գոյությունը կենցաղայիս
կարևոր խնդիրներից և հանդիսանում, և նրա
վերացումը կլինի նույնպես կուլտուրական
հաղթանակ՝ կուլտուրական հեղափոխու-
թան հակառակ:

Զագրայի դեմ սկսած պալքարից հետո
միենուզն ժամանակ ալդ պայքարը պետք ե-
ռողղված լինի նաև փափախի, քիթկալի,
քորզանդի (լերհանի շոր) և լերեք փեշանի
հաղուստների դեմ:

ՆՈՐ ԿԵՆՑԱԼԻ ԾԻԼԵՐԻ

Հոկտեմբերյան և նոյեմբերիան հեղափոխությունները, մեր կուսակցության և կառավարության այս ուժ տարվա համառ ու լեռնդուն աշխատանքները չեն անցել ապարդյուն։ Մեր լարված աշխատանքն աշխատանքի բոլոր ասպարեզներում, մասնաւորապես դյուղական կյանքում, տվել են իրենց շոշափելի արդյունքները։ Ուժ տարվա ընթացքում յեթե վոչ ամրողջովին, ալ կիսով չափ վերացնել այդ կենցաղը՝ դա հնարին կլիներ և վեր տմեն տիսակի հնարավորություններից, վորովկետե այդ կենցաղը հաղարավոր տարիների կենցաղ ե, վորը դյուղացիների համար դարձել ե քարացած տրաղիցիա, դժվար խորտակելի կուռք և այսորվա մեր պայքարից՝ ուղղած նրա դեմ, գյուղացին խրտնում, խորթ աչքով ե նայում և ափսոսում, վոր վելանում, սովորություններն ու տրաղիցիաները։ Ահա սրա համար ել բավական դժվար, սիանգամայն դժվարին ե լեղել մեր պայքարը գյուղում, ուղղված հին կենցաղի դեմ, և

մենք պայքարի մշակված մեթոդներ չենք ունեցել։ Վոր գլխավորն ե, խորհրդային իշխանությունը և նրա ղեկավար կոմկուսակցությունը մինչև այս վերջին յերեք-չորս տարին հազիվ զբաղված են յեղել մեր յերկրի քաղաքական, տնտեսական, շինարարական և այլ աշխատանքներով։ Իհարկե, դըրանք ել կուլտուրական աշխատանքներ են, վոր վոչվոք չի կարող ժիտել։ Յիշ այսոր, յերբ մեր տարած աշխատանքների բոլոր ասպարեզներում հասել ենք վորոշ նպատակի, հասել նախապատերազմէան շրջանին, դեռ միքանի բնագավառներում անցել այդ շրջանից, մեր կուսակցությունը, խորհըրդակին իշխանությունը իր աշխատանքի, իր պայքարի բանն ու բրիչն ուղղում ե դեպի պոր այլ ֆրոնտ, վորը պակաս չափով կարեմի այլ ֆրոնտ, վորը պակաս չափով կարեմի պոր ու նշանակալից չե մեզ համար. դա վոր կուլտուրական հեղափոխությունն ե, վորի պահանջն այժմեական ե և հրատապ։ Մեր ալահանջն ամսմեական ե և հրատապ, մասնավորապես աշխատավոր ամսասաները, մասնավորապես գյուղական, իրենց քայլաքական, տնտեսագյուղական, իրենց քայլաքական և այլ ֆրոնտիներն ական, շինարարական և այլ ֆրոնտիներն ականովելու հետամիասին՝ այսոր նրանք ծագահովելու հետամիասին՝ այսոր նրանք ծա-

ըավի յեն կուլտուրական հեղափոխության։
Հին կենցաղը, հին գիրքը, հին արվեստն
այլքս չեն բավարարում ու շարժում մեր
նոր աճող սերնդի հուզական աշխարհը,
վորն այսոր ուզում ե թաղել նոր կենցաղը։
և նրա գերեղմանի վրա ստեղծել, կառու-
ցել նոր կենցաղ, նոր կյանք և այդպիսով
գույզը լինել սոցիալիզմի ճանապարհի վրա։

Այսոր այդ նոր սերնդի միտքը, ստեղ-
ծագործական թափը շարժվել ե տեղից և
ցանկանում ե ստեղծագործել, շինել, կա-
ռուցել իր սեփական կուլտուրանց իր իսկ
արվեստը և ապրել ու շնչել նրանով։

Ահա այս կարևոր, այս չափազանց եյս-
կան խնդիրների ու լիրեռու յթների վրա
պիտի լուրջ ուշադրություն դարձնենք, և
մի շարք համապատասխան մարմիններ ժա-
մանակին, առանց ուշացնելու պետք ե ու-
ժեղացնեն կուլտուրական հեղափոխության
ճակատում տարվելիք պայքարի պատրաս-
տությունները, սրբն նրա ղենքերը և մար-
զեն այդ ճակատում կովող մարտիկներին։

Պետք է ամել ու շեշտել վոր նոր կեն-
ցաղի ծիլերն արդեն լիրեռում են, և հին կեն-

ցաղը խոշոր ճեղքվածք ե ստացել։ Այսոր
թե քաղաքում և թե գյուղում մենք տես-
նում ենք ծաղով, խալաթով, յեկեղեցով
պսակների, հարսանիքների։ Կողքին կար-
միր հարսանիքներ։ Չնայած վոր այդ հար-
սանիքներն իրենց բնույթով, իրենց եյու-
թիամբ նոր են և թերություններ ունեն
դեռ, բայց նրանք մերն են, մեր ցանկա-
ցածը, մեր աշխատանքի ծիլերը, մեր հա-
մառ պայքարի ծաղիկները։ Բացի դրանից,
մենք տեսնում ենք կարմիր թաղումներ,
կնունքներ, հակակրոնական ագիտացիաներ,
անհավատների խմբակների կազմակերպում,
յեկեղեցիներն ակումբների վերածելը ևայլն
և այլն։

Ահա նոր կենցաղի ծիլերը, նրանց աճու-
ը և նոր կենցաղի հաղթանակի գրավա-
կանը։

ԿՈՒՑՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՋԱՌԻԹՅԱՆ ԿԱՐՄԻՐ
ԲՅՆԿԱՐ

Գյուղում հին կենցաղի դեմ կռվելու,
կոմմունիստական դաստիարակություն մշտ-
ցընելու, գյուղը հիմնովին դարձնելու խոր-

Հըրդային գյուղ՝ ահա դա լինելու յե կուլտուրական հեղափոխությունը պլուզում և այդ հեղափոխության համար մզվելիք լուրջու համառ պայքարի կարմիր բանակին զինվորագրվելու ամենաառաջին պարտականությունն ընկնում ե գյուղում աշխատող կոմմունիստ և կոմիերիտ ընկերների վրա, և նրանք պետք ե լինեն այդ լուրջ աղայքարի ավանդարդը, նրա դրոշակակիրը։ Ապա սրանց թիկունքում պետք ե վստահ, աննկուն կերպով կանգնած լինեն գյուղթղթակիցները, բատրակները, չքավորները և անկուսակցական լերիտասարդությունը և այն անհատ կուլտուրական ուժերը, վորոնք դեմ են հին կենցաղին և ուզում են, վորհաղթանակի նոր կենցաղը։

Մեր կուսակցության բարձր որդաներն անհրաժեշտ ղեկավարությունը պիտի ուժեղացնեն և այժմյանից գրավեն կուլտուրական հեղափոխության գիրքերը։

ԻՆՉՈՐԵՍ ԿՈՎԵԼ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Գյուղում կուլտուրական հեղափոխություն կատարելու համար նախ և առաջ պետք ե կովել այն անկուլտուրականության, հետամնացության դեմ, պիոր գոյություն ունի գյուղում և ներկայումս ել հումառ կերպով խոշոր խոչընդուռ ե հանդիսանում մեր սոցիալիստական, անտեսական, կուլտուր-կրթական և այլ շինարարական աշխատանքների բնագավառում։ Իսկ անշ կուլտուրականության ու հետամնացության դեմ կովելու, վերացնելու համար նախ և առաջ, առաջին հերթին պետք ե կրակնուղել անգրագիտության դեմ, պայքարը տեղափոխել այդ կարևորագույն ֆրոնտը։ 1926 թ., Խ. Միության կենտվիճաքուրոյի տվյալների համաձայն, Խ. Հայաստանում ազգաբնակության թիվը կակմում եր 658,360. հոգի, վորից անգրագետները կազմում ելին 75 տոկոս։

Այնպես վոր մինչև վոր զգալի չափով չը-
կարողանանք վերացնել անգրագիտությու-
նը, ապա յերբեք չենք կարող կովել հին
կենցաղի, հետամնացության ու անկուլտու-
րականության դեմ և գյուղում կատարել
կուլտուրական հեղափոխություն։ Հեղա-
փոխություն, վորն ուժեղ թափով ն պաս-
տելու յէ գյուղի մեքենայացմանը, կոռակ-
բացմանը, կոլեկտիվ տնտեսությունների
զարգացմանը և, վերջապես, գյուղի լ կուս-
տըլացմանը։

Ի՞րարկե, այս պայքարում այս աշխատանք-
ներն իր հաղթանակին հասցնելու համար
խոշոր դժվարություններ կան մեր կուսակ-
ցության և աշխատավոր մասսաների առաջ։
Յել վորպեսզի դժվարությունները նվազեն,
խոչընդոտաներն արագ կերպով հաղթահար-
վեն, ուստի պետք ե հրատապ և լուրջ կեր-
պով մտածել գյուղում աշխատող կայրերի
պատրաստման և վերապատրաստման մա-
սին, վորոնք պետք ե հանդիսանան կուլ-
տուրական հեղափոխության ահծնվեր մար-
տիկները, հին գյուղի վերացման, և նորի
ստեղծման հմտության արտարապետները, նրա
բան ու բիթը։

Ամենից առաջ անգրագիտության, հին
կենցաղի վերացման, կուլտուրական հեղա-
փոխության, կուլտուրական նոր կենցաղ,
նոր գյուղ ստեղծելու համար տարվող պայ-
քարի ամենաառաջին մարտիկներն—ավան-
գարդը՝ պետք ի՛ հանդիսանան գյուղական
կոմիտեի տականները, պիոններները, պատժո-
ղովները, ուսուցիչները և մի շարք հասա-
րակական կազմակերպություններ ու որ-
դաններ, վորոնց մասին մենք իր տեղում
կխոսենք։

Պատքարը, կրակը գյուղում ամենից ա-
ռաջ պետք ե ուղղել այն կոմմունիստների,
կոմյերիտականների, պատգամավորուհինե-
րի, բատրակների, չքավորների և այս կոմ-
այն հիմնարկում աշխատող անձանց դեմ, վո-
րոնք գեռ չեն թողել հին, պապենական,
Աբովյանի և Պոռշյանի եպօպիայի կենցողը
և այսոր չեն ապրում նոր կենցաղով, Հոկ-
տեմբերի բերած սովորություններով ու
բարիքներով։

ԿՈՒԼՏՈՒՐԿԸՆ ՀԵՂԾՓՈԽԹՅՈՒՆԸ ՅԵԼ ԽԲԺԹ-
ԸՆԹԵԹՅՈՒՐԸՆՆԵՐԻ ԸՆԵԼԻՔՆԵՐԻ ։

Անգրագիտության վերացման, հին կեն-
ցաղի դեմ կովելու և կուլտուրական հեղա-

փոխություն կատարելու գործում՝ զլիսավորապես գյուղում խոշոր և անհետաձգելի դեր ու հնելիքներ ունի կատարելու խրճիթընթերցարանը։ Խրճիթ-ընթերցարանը գյուղում վոչ այլ ինչ ե, չեթե վոչ մի կուլտուրական ոջախ, լուսավորություն տարածող մի վայր, վորից պետք ե իրենց քաղաքական, գիտական, կրթական և գեղարվեստական հոգեստ սնունդն ստանան գյուղի հօծ մասսաները։

Խրճիթ-ընթերցարանները պետք ե կանգնեն իրենց կոչման բարձրության վրա և իրոք վոր գառնան մեր սոցիալիստական շինարարության; կուլտուրական հեղափոխության և զասակարգալին պալքարի զինանոցները գյուղում։

Մինչև այսոր ել մեր խրճիթների, լեթե չասենք 90 տոկոսը, գոնե 80—75 տոկոսը կանգնած չեն իրենց կոչման բարձրության վրա, Նրանք որելով, շաբաթներով փակված են լեղել, նրանց վարիչներն ել իրենց քեֆին; ինչ ուզել են, այնպես արել են: Կան խրճիթներ, վորոնք քաղաքական գրականությունից գուրկ են: Իսկ կան այնպիսի-

ները, վորոնց յիղած զրքերն ել կտնվում են սրա նրա մոտ և յերբեք չեն բարեհաճում վերապարձնել խրճիթ, կան, գյուղություն ունեն նաև այնպիսի. խրճիթներ, վորոնք գրքեր բոլորովին չունեն, բավական քիչ թերթեր են ստանում, չունեն վոչ մի անկուն, պատի թերթ լույս չեն ընծայում, յեթե լույս ել ընծայում են, այն ել տարեկան 2—3 անգամ, այն ել տոն որերը և այլն և այլն։ Այս յերեսույթը բավական խոշոր բաց և գատապարտելի թերություն ե, վորի գեմ պետք ե պալքարել և զործի գըշտուխ դնել ձեռնհաս, հմուտ և զործունացներների։ Տասնյակ խրճիթ-ընթերցարաններ ծառայում են զուտ վորպես նարդիկանաներ, դոմինոյի և այլ խաղալիքների վայրեր, մանավանդ՝ վորպես հեքիաթ պատմելու վայրեր, ուր ծերունիները մեր յերիտասարդությունն աշխատանքով կտրելով, գլխավորապես բավական թվով կոմմունիստների և կոմյերիտականների՝ զլիներին հավաքած՝ առավոտից, մինչև յերեկոնքի աթաթներ են պատմում այս կամ այն դեմքի, վիշապի կամ թագավորի՝ մասին։ Յեզ

դժբախտաբար, այս բոլորի մասին դիտեն տվյալ գավառի քաղլուսվածները, սակայն վոչ մի միջոց ձեռք չեն առնում այդ բացերը վերացնելու Ընդհակառակը, կան գավառային քաղլուսվարչություններ, վորոնք միայն և միայն զրադված են գավառի կենտրոնում ներկայացումներ կազմակերպելով և աշխատավորությունը, մեր մատադ սերբնդին կերակրելով «Ուշ լինինուշ լինի», «Պըլը» Պուղին և նման հին, խալտուրային պինսներով։ Աղդ ընկերները լայադ չեն անում կենտրոնից շարժվելու, շրջելու շըլանները, գլուղերը և ուսումնասիրելու քայլուսաշխատանքները։ Աշխատանքները վորոնք իրենց անմիջական աշխատանքների ուղն ու ծուծն են կազմում։

Թվածս բոլոր բացերը վերացնելու և խըլթ-ընթերցարանները, բառիս լայն իմաստով, իրենց կոչման բարձրության վրա դընելու համար պետք ե խրճիթվարները։ Ինեն հմուտ, քաղաքականապես պատրաստված և յեռանդուն, Գավքաղլուսվարչությունները պիտք ե դուրս գան կարինետային։ Կաղյուննի գելավարման ձերից, և,

վոր գլխավորն ե, գլխաղլուսվարչությունն իւ պետք և ուժեղացնի իր անմիջական հսկողությունը և փոխի գիրեկտիֆների ու հրահանգների շարլոն, անգործնական ձեր և անցնի գործնական, արդյունավետ ձեերի ու միջոցների և խրճիթների անելիքները, նրանց վրա դրված հեղափոխական պարտականություններն իր կոչման բարձրության վրա դնի և այդպիսով խրճիթ-ընթերցարանները գարձնի կուլտուրական, քաղաքական կանքի շտաբներն ու վորրանները։

Խրճիթ-ընթերցարանի միջոցով ե, վոր մեր աշխատավոր գյուղացին պիտք և ծանոթանա, սովորի իր տնտեսությունը, հողը, ալգին և այլն և այլն նոր տեխնիկայի, գիտության խոսքով ու խորհրդով մշակելու ձեերի հետ։ Խրճիթ-ընթերցարաններն են, վոր խթան են հանդիսանալու գյուղական աշխատավորությանը լծելու և մասնակից դարձնելու մեր սոցիալիստական և կուլտուրական շինարարությանը։ Այսպիս վոր չափաղանց խոշոր են խրճիթ-ընթերցարանների գերն ու անելիքները։ Ին գյուղը քան-

դելու և նորը կառուցելու դժվարին, բայց
վսեմ գործում:

ՎԱԼԵՎԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱԽԵՂՆԵՐԸ ՅԵԼ ԼՆԳԻՌԳԻ- ՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Դյուլի սոցիալիստական շինարարության
կուլտուրական հեղափոխության, գյուղա-
տնտեսության վերակառուցման և, վերջա-
պիս, գյուղը-սոցիալիզմի ճանապարհի վրա
դնելու ամենահիմնական, ամենատառաջին
նախարարյանը ճանդիսանում են կոլեկ-
տիվ տնտեսությունները, նրանց կազմա-
կերպումը և ուժեղացումը:

Ահա, հենց այդ պատճառով ե, վոր մեր
կուսակցությունն իր ուշադրության ամե-
նագլխավոր կետը դարձրել և դեսի կոլլեկ-
տիվ տնտեսությունների կաղմակերպումն
ու լայնացումը և կորչինարարության ծա-
վալման աշխատանքները:

Մեր կոլտնտեսությունների մեջ մտած են
և մտնում են չքավոր գյուղացիներն ու
բատրակները: Մի բան, վոր մեր կուսակ-
ցության քաղաքականությունն և և դա
բղխում ենք եյությունից և սկզբունք-
ներից: Սակայն, դժբախտաբար, կոլլեկտիվ
տնտեսությունների անդամների համարյա

75 տոկոսն անդրագետ և կիստգրագետներ
են: Խորհրդային Հայաստանում կան 270
կոլտնտեսություններ, վորոնք ընդգրկում
են 28,000 շունչ, և ահա գրանցից մոտ 20
հազարն անդրագետներ են: Իսկ նման կոլ-
տնտեսությունները կաճեն ու կզարգանան
բավական գանգաղ կերպով և այդպիսինե-
րը լրիվ կերպով չին կարող լինել սոցիալիզ-
մի-կոմմունիզմի առողջ բջիջները, չեն կարող
ուժիղ թափով նպաստել գյուղի սոցիալիս-
տական շինարարությանը, գյուղը դնելին-
գուստիրից ճանապարհի վրա: Դեռ 1920
թվին ընկ. կոմսոմոլի Յ. ըդ համա-
գումարում ասել ե. «Անդրագետների յերկ-
րում չի կարիլի կոմմունիստական հասա-
րակակարգ ստեղծել...», դրա համարել այսոր
ել ավելի, քան յերբեմ, մեր կուսակցու-
թյունն իր ամրադրությունը, իր
ուժերի մաքսիմումն ուղղել ե դեպի կուլ-
տուրական ֆրոնտը, դեպի անդրագիտու-
թյան վերացման գործը:

Ուրեմն, վորակես այդպիսին, մեր կուսա-
կցության, կուլտուրթական բարձր որ-
գանները պետք ե մտածն և աշխատեն,
վոր խոշոր կոլտնտեսություններին կից,
ինչպես դա արվում ե Ռուսաստանում,

կազմակերպվեն լիկեայաններ, կուլտֆոն-դերի միջոցներով, անգրագիտությունը վերացնելու համար։ Կոլտնտեսություններին կից կազմակերպված կամ կազմակերպվելիք լիկեայաններում կարող են սովորել նաև այն գյուղացիները, վորոնք վաղ թե ուշ մոռնելու յեն և ցանկություն ունեն մանելու կոլտնտեսությունների մեջ։ Ցերե ու գում ենք ունենալ լավ, գիտակից և որինակելի կոլտնտեսություններ, ապա պետք ե աշխատենք, վոր վոչ մի անգրագետ անդամ ըինի նրանց մեջ։

ՓՈԿԵՐԸ ՅԵՎ ՆՐԾՈՅ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ՌԴԳՐԾԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՍՊՈՐԻՁՈՒՅ

Անգրագիտության վերացման հակա գործում գյուղփոկերն ել ունեն խոշոր անելիքներ։ Փոկերի գործն ու անելիքը հո մենակ նա չի, վոր նա հավաքի և բաժանի։ Վոչ նա, փոկը պետք ե իր միջոցներից ոգնության հասնի լիկեայաններում սովորող չքավարներին և բատրակներին դրինա։ Կան և այլ պարագաներ մատակարարելով, Փոկը և գյուղական այլնացը՝ որդանները, կազմակերպությունները, ուսուցիչը, բժիշկը և գյուղում աշխատող ինտելլիգենսո ու-

ժերը՝ բոլորը միասին ձեռք-ձեռքի տված պիտք ե լծվեն անգրագիտության, հին կենցաղի վերացման, կուլտուրական հեղափոխության և նոր կենցաղ, նոր՝ կարմիր գյուղ կտուցելու աշխատանքներին։

Դժբախտաբար շատ փոկեր չեն հասկացել և ներկայում ել չեն հասկանում իրենց կոչումը, իրենց անմիջական Փունկցիաներն ու պարտականությունները և միայն զբաղված են տարին բոլոր բաշխելով ու գանձելով։ Նրանք գյուղի կուլտուրական աշխատանքներին բոլորովին չ' ոգուած յեթե ոգնում ել են, այն ել բավական մեծ դժվարություններով ու դաշմական մեծ դժվարություններով ու դաշմական դաշտով։ Տասնյակ դեպքեր են պատահել, յերբ գյուղի չքավորի չերեխան կամ բատյերը գյուղի չքավորի խերեխան կամ բակը փոկից խնդրել են նպաստ տեսրի կամ գրքի համար, փոկի նախագահն անպատճեն չ' սատու խոսքերով նրանց մերժել ե և այլն։ Ուղինակներ շատ կան։

Այսպես վոր կուլտուրական Փրոնտում, անգրագիտության վերացման գործում խոսրականության ունեն կատարելու փոկերը, շոր աշխատանք ունեն կատարելու փոկերը, Այդ բանը պետք ե լավ հասկանան ու ըմբռունեն փոկերը, մասնավորապես նրանց նա-

խագահները, և միանգամից թողնեն այն կազմոնի, չկամ ու դիկուառորական ձեն ու մոտեցումը, վոր մինչեւ այսոր գոյություն և ունեցել:

ՊԱՏԺՈՂՋՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՆՍԵՆՑՆԻ ԸՆԴԲՈԳԻՑՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՍՅՈՒՄԸ

Մեր գլուղերում կանանց անգրագետների տոկոսն ավելի խոշոր եւ, քան տղամարդկանցը. զբա պատճառն, իհարկե, մեղ բոլորիս հայտնի յեւ Յերբեք անտեղի չի ասել ընկ. Լենինը, վոր «առանց կնոջ մասնակցության չենք կարող սոցիալիզմ կառուցել»: Ուրեմն պարզ եւ, վոր կինը որեալ եւ գառնա գրագետ, բանիմաց, Դրա հ սմար ել մեծ ուշադրություն պետք եւ դաշնանք կանանց միջից անդրագիտությունը, հին կինցաղը, սնոտիապաշտությունը, կրոնական հավատը վրացնելու աշխատանքների վրա: Յեթե վերոհիշյալ բացերը, յերևութները չվերացնենք, այն ժամանակ մեր կուսակցությունը, խորհրդակին իշխան ությունը խոշոր դժվարությունների առաջ կանգնած կլինեն զյուղերում, սոցիալիստական շինարարության աշխատանքների բնագավառում:

Ահա զրա համար ել թե կենտրոնական բանկեղջբաժինը, թե զավթանգեղջբաժինները և թե գալիքուում, շրջանում ու գյուղում աշխատող կուսակազմակերպությունները, կուսընկերները, կոմիերիտականները և գյուղական այլ կազմակերպություններ, պետք եւ լուրջ ուշադրություն դարձնեն պատժողովների մեջ տարվելիք աշխատանքների վրա: Բոլոր անգրագետ և կիսապրագետ պատկամանքուուհիները, նրանց հիմնական աշխատավոր կանալք, պետք եւ մտնեն լիկայանները և վերացնեն իրենց անգրագիտությունը: Բայց և այնպիս, առաջին եերթին կանանց անգրագիտության վերացման գործում խոշոր տեղը բռնում են պատժողովները:

ԿԻՆՈՆ ՅԵՎ ԿԱՌՏՈՒՐՈԿՅՆ ՀԵԼԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Գյուղի աշխատավորական մասնաների անկուլտուրականությունը, հին կենցաղը հիմնովին փոխելու, հեղաշրջելու և նոր կենցաղի աշխատավորական հեղափոխություն առաջ, կուլտուրական հեղափոխություն առաջ բերելու գործում հակայական և անդուժական անելիքներ ունի կինոն:

Կինոլի հեղափոխական, նոր կենցաղակին և դաստիարակչական նկարների միջոցով և, վոր մեզ կհաջողվի բազմաթիվնորություններ տանել գյուղը, կովել տպիտության, անկուլտուրականության և հին, վնասակարու այլահնդուկ կենցաղի դեմ և առաջ բերել մեր բոլորիս ց նկացած կուլտուրական հեղափոխությունը, Հեղափոխություն, վորը հեղաշրջելուց մեր բոլոր աշխատանքները, վոր տանում ենք և տանելու յենք սոցիալիստական և կուլտուրական շինարարության ասպարիգում:

Համապատասխան որգանները պետք եռ ուշադրություն դարձնեն այս միակ կուլտուրական միջոցի վրա և հնար լեղածին չափ՝ անցնեն մեր յերկրի կինոֆիլացիայի դորձին: Իսկ այն հին, սոցիալապես և հասարակականապես արժեք չներկայացնող նկարների մուտքն անպայման արգելել գեղի գլուղ, վորոնք միայն և միտին այլասերդում և վնասակարու անվանվոտ սովորությունները են տանում դեպի գյուղ: Ուստի մեր լողունգը պիտի լինի՝ ռախեուի լիրեաք դեպի գյուղ:

ԱՄԳԻՐՆ ՎՈՐՊԵՍ ԱՄԵՆՅԹՈՒԹՈՐ ԽԹԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿԱՌԱՋԱՐԱԿԱՑՆ ՀԵՂԱՓՈԽԱԼԻԹՅՈՒՆ ԳՈԲԾԱԽՄ Կասկածից միանգամայն գուրս և, վոր կինոլից հետո զուցե և առաջինն և ուղիոն, վոր կոչված և հեղաշրջելու նահապետական գյուղն իր բազմաթիվ սովորություններով, նիստուկացով, արաթներով և այլն և այլն ու նրա անփառունակ ավերակների վրա կառուցելու, ստեղծելու աշխատավոր զասակարգի, խորհրդային իշխանության ցաւակացած նոր՝ կարմիր գյուղը Ռազմիկոն խոշոր բարձրություն և անելիքներ ունի գյուղական միջավայրի կուլտուրական կյանքի, վերելքի աշխատանքներում: Նա կյանքի լունգուական, հեղափոխական է, վոր լունգուական, հեղափոխական կենտրոններից շարունակ գյուղ և բերելու թարմ լորեր, կուլտուրա, զիտություն, նոր խոսք, նոր կենցաղ, նոր նիստուկաց և վերջապես կուլտուրական հեղափոխություն և մի նոր դենք՝ կովելու հնի դեմ:


ԽՈՐհրդային Հայաստանի գյուղերը՝ կեռ 7—10 տոկոսով են պատաճ ուսղիոցանցով: Շատ քիչ գյուղերում կան սաղիուկայաններ, վորոնց մեծ մասն ել, դժբախտաբար,

փշացել են և չեն աշխատում, ջնորհիվ նը-
րան, վոր չունենք ուղիո հրահանդիչներ,
վոր շրջեն գյուղերը և փշացած ուղիուապ-
ութատաները կարգի բերեն:

Ուադիսուտուղիան և հումագատասիան բարձր որդանները պետք եւ մտածեն և հոգան, վոր մոտ ապագայում մեր լերկրի ուաղինքիկացիայի զորձը շուտ և արագ դուխ բերդի:

Վերջացնելով մեր խոսքը կուլտուրական հեղափոխության և կենցաղային խնդիրների մասին, նորից ենք շեշտում, վոր գյուղի կուլտուրական կյանքը, կուլտուրական հեղափոխությունը պահանջում է լավ, ուժինակելի խրճիթ ընթերցաբաններ, բավականաչափ մասսայական-հանրամատչելի գրականություն, թատրոն, կինո, ռադիո և գյուղում աշխատող հմուտ ու յեւանդուն ընկերների կազմեր:

Ուրեմն ըոլորս գեպի կուլտուրական հեղափոխություն, գեպի սոցիալիզմի կառուցման անհետաձգելի աշխատանքների վրանտը:



ԳԻՒԾ 12 ԿՈՊ. Մ. (1³/₄ մամուլ)

ՏԱՐ



Կ. Լայ
ՏԱՐ 0

Г. Казарян

Культурная революция и бытовые
задачи в деревне

Госиздат ССР Армении
Ереван - 1930

8(47.92)
2-68

«Ազգային գրադարան



N 0192425

